

5.3. 2007թ. օգոստոս ամսվա հիդրոտեղեկությունների փոխադրման վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, օգոստոսին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայի սահմաններում, փոքր-ինչ դրական շեղումով (ՀՀ Սյունիքի մարզում՝ 1-2 աստիճանով բարձր):

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով (ՀՀ Սյունիքի մարզում՝ 2-3 աստիճանով), երկրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր 1 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +31 +34°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +25 +29°C, ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում՝ +22 +26°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է օգոստոսի 8-9-ին և 13-ին: Արարատյան դաշտավայրում գրանցվել է +36 +38°C, Սյունիքի հովիտներում և ՀՀ Տավուշի մարզում՝ +31 +36°C, Սյունիքի նախալեռներում, ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում՝ +27 +30°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում կազմել է +17 +22°C (ք.Դիլիջանում՝ +13°C), Սյունիքի նախալեռներում, ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում՝ +9 +14°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է օգոստոսի 20-22-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է +4 +9°C (ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) և Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ +11°C), ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +10 +14°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +14 +18°C:

Օգոստոսին տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից զգալի բարձր: Արարատյան դաշտավայրում, ՀՀ Կոտայքի և Շիրակի մարզերում այն կազմել է նորմայի 250-350%-ը (ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 153%-ը, ք.Արտաշատում, Ուրցաձոր և Մասրիկ գյուղերում (ՀՀ Արարատի մարզ)՝ համապատասխանաբար 440%-ը, 480%-ը և 405%-ը), ՀՀ Լոռու մարզում՝ 170-300%-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 140-280%-ը, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 163-230%-ը (ք.Աշտարակում՝ 520%-ը), ՀՀ Սյունիքի մարզում՝ 115-240%-ը (ք.Մեղրիում՝ 30%-ը, ք.Գորիսում՝ 83%-ը), ՀՀ Տավուշի մարզում՝ 90-140%-ը:

Օգոստոսի 2-ին, 21-26-ին և 29-31-ին առանձին տարածաշրջաններում, 4-ին, 17-18-ին և 27-28-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է անձրև և ամպրոպ:

Օգոստոսի 2-ին և 9-ին ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ), 2-ին և 14-ին՝ ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ), 9-ին և 12-ին՝ ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), 9-ին՝ ք.Դիլիջանում, 14-ին՝ ք.Թալինում (ՀՀ Արագածոտնի մարզ), 24-ին՝ Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), առանձին օրեր՝ ք.Երևանում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 13-22 մ/վրկ, պոռթկումները՝ 15-26 մ/վրկ (14-ին ք.Իջևանում արագությունը՝ 28 մ/վրկ, պոռթկումները՝ 30 մ/վրկ): Օգոստոսի 8-ին, 12-ին և 14-ին Պուլկիմի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ) դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 50-200 մ: Օգոստոսի 22-ին և 27-ին ՀՀ Վայոց ձորի մարզում, 22-ին՝ ՀՀ Շիրակի մարզում, 27-ին՝ ՀՀ Լոռու մարզում դիտվել է կարկուտ (9-ին Ուրցաձոր գյուղում կարկուտի տրամագիծը կազմել է 12 մմ, 14-ին Մասրիկ գյուղում՝ 10 մմ): Օգոստոսի 17-ին ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ) դիտվել է ուժեղ անձրև (ինտենսիվությունը՝ 51.2 մմ/4 ժամ), 22-ին՝ Մասրիկ գյուղում (ինտենսիվությունը՝ 37.7 մմ/12 ժամ), 23-ին՝

ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ) (ինտենսիվությունը՝ 70 մմ/6 ժամ), 30-ին՝ ք.Ապարանում (ինտենսիվությունը՝ 57 մմ/8 ժամ):

Օգոստոսին հանրապետության հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջանների գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 130-115%-ը, իսկ մնացած շրջանների գետերում՝ 80-90%-ը:

Սևանա լճի մակարդակն օգոստոս ամսվա ընթացքում իջել է 6 սմ-ով և 2007թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել 1898.94 մ, որը 2006թ. նույն օրվա համեմատ բարձր է 47 սմ-ով: Ամսվա ընթացքում Սևանա լճից ջրի բացթողումը կազմել է 48.361 մլն. խոր. մ: